

Բայց ոչ բովանդակն, այլ զայն միայն, որ ի վերայ Երուսաղէմի ջազափին, և Հրէից ազգին պատերազմունք յարեան՝ որ է վեց հատոր: Եւ երկրորդ՝ Գիոնէսիոսի արիսպագացոյ գիրք, զի թէպէտև առաջին թարգմանեալն Ստեփաննոսի Սիւնեցւոյն զոյր ի մէջ մեր, այն համառօտաբոս և դժուարհասկանալի էր, իսկ սորայս թարգմանեալն ևս նոյն է, բայց դիւրահասկանալի է՝ որ ոչինչ մնայ անհաս յընթերցողէն, զի մեկնութիւնն յաճախ է և դիւրահաս: Եւ երրորդ գիրք՝ որոյ անունն է գիրք պատճառաց, այլ և կոչին զոս զի վեր քան զբնականս, որ է Աստուածաբանութեան գիրք, զի Աստուածաբանութիւն է ամենայն բան նորա՝ և է ինքն պրակք երեսուն և վեց: Չորրորդն գիրք՝ բանք առակաւորք՝ որ զվարուց և զկենցաղավարութենէ մարդկան պատմէ իբր թէ օրինակ ամենայն մարդկան, որոյ մակագրութիւնն էր լատինականաւ լեզուաւն, հայելի վարուց. և յորժամ թարգմանեցին ի Հայոց լեզուս այլուի գնոյն մակագրութիւն մակագրեցին հայելի վարուց, և յոժ համող և ակնորժ են բանք այսորիկ զրոյ: Արդ՝ մինչև ցարդ՝ այսօրն զարդիւնս արար սա յեկեղեցին Հայոց»: (Տես զՊատմութիւն Առաքել վարդապետի (Ամստերդամ) յէջ 398-400):

(Շարունակելի)

ՄԵՐՈՒՎ Յ. ՍԵՅՍԵԱՏ

Նութինք Ստեփաննոս վարդապետի իւրովացոյ զորոց յիշատակէ յակնէ յանուանէ պատմագիրն Առաքել յիւրում պատմութեան: Տպագրեցան արդեօք այնպիսի թէ յանկան փոշոյ եղն ցեցակեր ի վանս Սրբոյ Էջմիածնի:

Չ Ա Ր

Ռուսական այս բառը, ինչպէս նաև գերմանական իմպերատոր, յառաջ եկած են լատին caesar = կայսր-ի (imperator) իմաստով: Ռուս լեզուին մէջ ձոր կը նշանակէ բագաւոր և ոչ կայսր՝ որ աւելի ընդարձակ և գերազայն իմաստ ունի և յիլուի ռուս արքայն կոչուած էր կայսր (imperator) ամբողջ Ռուսաց և ձար Քաղաքնի, Աստրախանի. Սիպերիոյ և այլն: Ռուսք ուրիշ թագաւորները կը կոչեն ռալի:

Ռուսաստանի կայսերք կը պարծէին թէ Արեւելեան կայսրութեան ժառանգներ են, վասն զի իվան Գ. ամուսնացաւ 1472ին թովմաս Պալէոլոկի Արևելքի վերջին կայսեր եղբոր զստեր՝ Սոֆիայի հետ. անոր համար կ. Պալիս ռուսերն կը կոչուի Չարիկրատ «Քաղաք Չարին»:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՆՈՒԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

ԺԴ.

ՀէֆիՄԱՐԱՆ ՍԻՄԷՈՆ ԿԱՄԱՐԿԱՊՅԻՒ

(Շար. տես Բաղմ. 1924, էջ 74)

Յիշատակարանները հետեւեալներն են.

- « ԳԻՐԲՍ ՈՐ ԿՈՉԻ ՀէֆիՄԱՐԱՆ »
- « ԱՐԱՐԵԱԼ Ի ՅԻՄԱՍՏՈՒՆ ԲԺՇԿԱՊԵՏԱՅՆ »
- « Օղեւն՝ հոյի Սորբ Աստուած Հլմարիտ »
- « ԳՐԲԱԼ ԵՂԵԻ Ի ՆՈՒԱՍՏԷ. »
- « ՓՐԿԶԻՆ ԵՄԱՌԱՅ ՍԻՄԷՈՆԷ. »
- « ԱԿԱՅ ԳԻՒԴԷՆ ԿԱՄԵՐԿԱՊԷ. »
- « ԱՐՈՒՅՏԱՐԷ ԻՐ ՍԱՌԱՅ Է. »
- « ԵՒ ՀՕՐԻ ԱՆՈՒՆԻ ԳԻՐԳՈՐԻԷ. »
- « ԸՆԹԵՐՏՕՂԻՆ ՈՂՈՐԾԻՍ ՏԱՅԷ. »
- « ՄԻՈՅ ՀԱՅՐ ՄԵՐԻՒ ԱՄԷՆ. »

« Ես իմ կենաց մէջ ինչ որ յսեր եմ
 « փորձեր եմ քե մեզի որ պատաներ է,
 « կամ այոց, ամենն ի յայս ցրբուց գրեցի
 « առ ի յիւոյ յիշատակի համար. որ և
 « յիշատակն արդարոց օրհնարեամք եղիցի,
 « եղիցի. Ամեն: »

« Որ և գրեցաւ տնտրակս ի բուսակահիս
 Հայոց Ռալոյ. յունվարի Ա. »

« Ի Մարտաքաղաքն Ըստանպոյ »

« Ի շնչին Ետար Յարոսթենէ վասպու-
 բականցոյն եղի. զծագրեցեալ »

Յայտնի է որ Հէքիմարանիս Հեղինակը ինքն է սոյն սողերուն զբողը, այսինքն Ակնայ կամարկապ գիւղացի Սիմեոն Գրիգորեան՝ արհեստով առաաֆ (լուծալափոխ) եղող անձը, որ կ'երևի՝ միանգամայն բժշկութեամբ ալ կը պարապի եղբր, բայց այս հատորին բուն գրիչը՝ ինչպէս կը